# Արթուր Աղաբեկեան



Ծնուել է 1963թ. Նոյեմբերի 24-ին ԼՂ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գիւղում:

1988-1994թթ. մասնակցել է Արցախի ազատագրական պայքարին, եղել է ԼՂՀ Հադրութի պաշտպանական շրջանի առաջին հրամանատարը, ապա՝ ԼՂՀ պաշտպանութեան բանակի շտաբի 4-րդ բաժնի պետը:

1992թ. եղել է ԼՂՀ ԳԽ առաջին նախագահի խորհրդական:

1992-1996թթ. եղել է ԼՂՀ պաշտպանութեան բանակի առաջին ՊՇ հրամանատար:

1997-1999թթ. եղել է 1-ին ԲՇ հարաւ-արեւելեան բրիգադի հրամանատարը:

1999թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով նշանակուել է ԼՂՀ ներքին գործերի նախարար:

1999թ. ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակուել է ՀՀ կառավարութեան տարածաշրջանային միաւորման վարչութեան պետ:

2000թ. նշանակուել է ՀՀ պաշտպանութեան փոխնախարար:

2000թ. ՀՀ նախագահի հրամանագրով նրան շնորհուել է զօրավարի զինուորական կոչում:

2003թ. ՀՀ նախագահի հրամանագրով նրան շնորհուել է զօրավարի զինուորական կոչում:

2007թ. մայիսի 12-ին Ազգային ժողովի պատգամաւոր է ընտրուել համամասնական ընտրակարգով ՀՅԴ կուսակցութիւնից:

2007թ. Յունիսի 7-ին ընտրուել է ԱԺ պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողովի նախագահ:

Պարգեւատրուել է ՀՀ երկրորդ աստիճանի «Մարտական խաչ», ԼՂՀ առաջին աստիճանի «Մարտական խաչ» «Ազատութեան համար», «Դրաստամատ Կանայան» շքանշաններով:

Ամուսնացած է, ունի երեք երեխայ: